

ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅՈՑ ՆՈՐԱԳՈՒՅՆ ԷՊՈՍԸ, ԾԱԳՈՒՄՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ՀԱՐՑԵՐ. ԽԱՉԻԿ ԴԱՇՏԵՆՑԻ «ՈՒՆԶՊԱՐՆԵՐԻ ԿԱՆՉ» ԵՎ ՈՒՐԲԵՆ ՏԵՐ-ՄԻՆԱՍՅԱՆԻ «ՀԱՅ ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆԻ ՄԸ ՅԻՇԱՏԱԿՆԵՐԸ»*

Նարինե Հովհաննիսյան

Բանալի բառեր՝ ֆիդայական շարժում, նորագույն վիպասք, բանահյուսական լեզվամտածողություն, հրաշապատում լիցք, սկզբնաղբյուր, վավերականություն, վերաշարադրանք, անօրինակ հերոսություն, պատվախնդրություն, անձնագոհություն, ուխտապահություն:

Խորհրդահայ գրական կյանքում 1979 թ. երևույթի պես ընկալվեց Խ. Դաշտենցի «Ռանչպարների կանչը»: Թեման նորույթ չէր ինչպես հայ գեղարվեստի և պատմագիտության բնագավառում, այնպես էլ համահայկական իրականության մեջ: Հայոց նորագույն պատմությանը անուրանալի ակորդը հավելած ֆիդայական շարժման հերոսապատումը լեզենդի պես ժողովրդի կողմից բանասացվում էր տասնամյակներով: Դաշտենցի կողմից գրական նորույթ էր թեմայի արտահայտության ժանրային եղանակը՝ վիպասքը: Վիպասքը կամ վիպասանությունը ավանդական ժանր է՝ ոճական և կառուցվածքային ինքնատեսակ համակարգով: Ժանրի բնութագրիչ հատկանիշներից Դաշտենցի վիպասքում զգալի են բանահյուսական լեզվամտածողությունը, սյուժետային լայնածավալ, բազմաձյուղ ընդգրկունությունը, ազգային ոգեղեն կերտվածքի ընդհանրացումը, նյութի պարզ վերարտադրությունը, վավերականությանը միախառնված հրաշապատում լիցքը, նաև թեթև երգիծանքի տարրը հերոսների խենթ, արտասովոր գծերի հանդեպ, որ բնավ բացասական միտվածություն չունեն: «Ռանչպարների կանչ»-ի ժանրային բնույթը Դաշտենցը ներկայացրել է հեղինակային խոսքում՝ չտարբերակելով վիպասանություն և վեպ ժանրերը, ինչը որոշարկում է «Ռանչպարների կանչ»-ի՝ որպես ժամանակակից վեպի բանահյուսական հիմքը կամ ավանդական և նորագույն վեպերի համադրման գրական հնարանքը: Ֆիդայական շարժման վիպականացման կամ էպիկականացման միտումը աննկատ չմնաց քննադատության կողմից: «Ռանչպարների կանչը» ժողովրդական վիպասք է, «վիպասանություն», պոետիկայով ամենասերտ աղերսներով կապված ժողովրդական բանահյուսության աղբյուրների, կարելի է ասել՝ «Սասունցի Դավիթ» վիպերգից սերող ասացողական-ասմունքային արվեստի հետ» [1],- դիտարկում է Ս. Աղաբաբյանը: Ինչպես նկատում է գրականագետը, ժանրային ընտրությունը պայմանավորված է շարժման էությանը ամենից ավելի պատշաճող պարզ ու բնական, պարզունակության չափ պարզ, միամիտ, «անարվեստ», «ռամիկ պատումի» [2] անհրաժեշտությամբ:

Անշուշտ, նորագույն վիպասքի մտահղացումը, ավանդական և ժամանակակից վեպերի ժանրային առանձնահատկությունների սինթեզումը գեղարվեստական հնարանքից զատ պատմական գործոն էր, նաև էպիկական սկզբնաղբյուրների և բանասացության վերաշարադրման հետևանք: Ֆիդայական սերնդին վիպականացնելու ամենապատշաճ եղանակը, ինչպես նկատվել է, վիպասանությունն է, վիպերգը, հերոսագրույցը, դյուցազներգությունը կամ էպոսը: Դասական վեպի ժանրից «Ռանչպարների

* Հոդվածն ընդունվել է 18.10.19:

Հոդվածը տպագրության է երաշխավորել ԱրդՀ գրականության և լրագրության ամբիոնը: 12.11.19:

կանչը» պարականոն է և այն առումով, որ ազատ է հեղինակի սուբյեկտիվությունից, հերոսների ներանձնական, հոգեբանական խոր ներթափանցումներից: «Դասական բոլոր ժանրերը,- նկատում է Մ. Բախտինը,- ավարտված ու անփոփոխ են, և նրանց սահմանումը կանոնական ու վերջավորված է: Այլ է վեպը: Նա չի ավարտված, նա չունի կայուն ձև, նա մշտապես նորոգության ու փոփոխության ընթացքի մեջ է» [3]: Վիպերգելով ֆիդայիների, իրենց սրտի մեջ «չաթալ օսկոր» և «չորս պլոճիկ» ունեցող հերոսների առասպելատիպ վարքը՝ Դաշտենցը գրում է. «Այնքան արտասովոր և առասպելական էին այդ սերնդի մարդիկ և իրենց գործերը, որ թեև այս վեպի ամբողջ նյութը իրական է, կատարված եղելություն, բայց ոմանց կարող է թվալ անիրական և հեքիաթային» [4]: Ծանոթ լինելով Ներքին Թալինում և Իրինդում ապաստանած արևմտահայ գաղթականության պատմություններին, ստեղծագործության նախանյութ ունենալով «-խողեղան» վեպը՝ տեսածն ու բանասացվածը Դաշտենցը համալրում և ճշգրտում է աղբյուրագիտական վավերագրերով: «Նոր վեպի համար օգտագործել են մայր հայրենիքում և սփյուռքում լույս տեսած որոշ հուշագրություններ, ականատեսների վկայություններ և պատմական ու աշխարհագրական աշխատություններ, դրանցից իբրև ատաղձ ընտրելով բացառապես այն դրվագները կամ եղելությունները, որոնք առնչվում են իմ ընտրած նյութին» [5]:

Պատմական հիմնական սկզբնաղբյուրը, որ մշակել է Խ. Դաշտենցը, Ռուբենի «-Հայ յեղափոխականի մը յիշատակները» յոթհատորյակն է: Մշակելով, հաճախ նույնիսկ ուղղակիորեն վերշարադրելով այն՝ Դաշտենցը կերտել է ժամանակակից վիպասը՝ մեծապես նպաստելով արդի վիպասի զարգացման գործընթացին, ազդակ հանդիսանալով վերջինիս ժանրային տիրույթի ընդարձակմանը: Դաշտենցի վիպասի և Ռուբենի հիշատակարանի արտասովոր հարազատությունը քննադատության մեջ տեղիք տվեց տարամետ գնահատումների: Եթե խորհրդահայ քննադատությունը գերազանցապես երևույթը որակում էր որպես էպիկական ստեղծագործության գործոն, սփյուռքահայ քննադատական միտքը լուրջ անհանգստություն դրսևորեց: 1979 թ. «Բագին»-ում հոդվածաշարով հանդես եկավ վաստակաշատ քննադատ Պ. Սնայանը: Գրականագետի անաչառ դիտարկումները բխում էին նախ և առաջ աղբյուրագիտության խորաքննի իմացությունից: Սփյուռքահայ հոգևոր դաշտում գնալով տիրական դարձավ այն միտումը, որ Դաշտենցի վիպասը ոչ թե պարզ բանագրություն է, այլ միջոց՝ խորհրդային վարչակարգի արգելափակության պայմաններում ժամանակակիցների մերկայացնելու հայ հեղափոխական շարժման բուն իսկությունը: Պետք է նկատել, սակայն, որ, ընդօրինակելով Ռուբենին, Դաշտենցը զգուշաբար շրջանցել է ֆիդայական շարժման գործում Դաշնակցության ավանդը, ֆիդայիների դաշնակցական պատկանելությունը, երբեմն էլ վերափոխել նրանց անունները. «Նրանք խումբ-խումբ եկան և լցվեցին այս վիպասանության մեջ, ոմանք իրենց անուններով, մի քանիսն էլ անունները փոխած» [6]: Դա վերաբերում է նաև Դաշնակցության պատկառելի գործիչ, հայդուկապետ Ռուբենին՝ հիշատակարանի հեղինակին:

Գրական ժամանակին տուրք տալով՝ Դաշտենցը նաև հակված է ֆիդայական շարժումը ներկայացնելու որպես գյուղացիական շարժում, և այս մտայնությունը եզրավորվում է վիպասի խորագրից, երբ համահավաք խորհրդանիշ է ոչ թե ֆիդային, այլ ռանչպարը: Դաշտենցագետ Կ. Վարդանյանը, անդրադառնալով Ռուբեն և Դաշտենց առնչությանը՝ «Ռանչպարների կանչ»-ի արժանիքներից շեշտադրում է «էպիկական մտածողության ու շարադրանքի բանասիրական-էպոսային միտվածությունը» [7]՝ նկատելով, որ «բովանդակային մանրամասներից զատ» «Ռանչպարների կանչ»-ի էպիկական մտածողությունը ևս մեծապես պայմանավորված է Ռուբենի Հիշատակարանով» [8]: Դ. Գասպարյանը առավելապես հակված է հանգամանքը հիմնավորել հավաստիության աստիճանով. «Դաշտենցը հավաստի է այն աստիճանի, որ նրա շարադրանքի որոշ էջեր նույնությամբ համընկնում են ազատագրական շարժման պատ-

մութայնն ու առանձին հուշագիրների վկայություններին» [9]: «Ռուբենի յուշերը,- նկատում է Ռուբեն Դարբինյանը,- կը ներկայացնեն անգնահատելի ատաղձը ազատատենչ հայության նորագիր ժամանակներու դիցազներգութեան: Եվ, իսկապէս, որքան շատ միւթ կայ իմ մեր ներկայի եւ ապագայի բանասէրներու դիցազներգական ստեղծագործութեան համար» [10]: Ռուբենի պատմության արժեքչիւղը նույնքան պատկառելի է, որքան խորենացու «Հայոց պատմությանը», և առանց վերապահության կարելի է պնդել, որ Ռուբենն է ֆիդայական տարեգրության պատմահայրը:

Մ. Գալշոյանը, Դաշտենցի ծննդյան 70-ամյակին՝ 1980 թ. մայիսի 22-ին, արժևորելով գրողի ավանդը և նրան դասելով բրաբիոն ծաղիկ որոնողների շարքում, նկատում է, որ ֆիդայիները, որոնց բնորոշում է որպէս «հայոց դաժան լեռներում բարկացած քայլող աստվածներ» [11], «հայոց պատմության հազիվ լուսանցքում են տեղ գտած» [12], մինչդեռ հայ ֆիդայիների «ըմբոստ ձակատները մենք դեռ պետք է համբուրենք» [13]: Ֆիդայիների վերաբերյալ նման գնահատումը նորություն չէ հայ մշակույթի պատմության մեջ. «Յիշածս ու չյիշածս անունները,- գրում է Ռուբենը,- կը ներկայացնեն այն սերունդը, որ իր զոհաբերութեամբ, իր յեղափոխական խառնուածքով, իր բարոյական ըմբռնումներով մէկ անգամ միայն ծնաւ մեր կեանքին մէջ եւ երկրորդ անգամ այլեւս աշխարհ չտեսաւ» [14]: Դաշտենցի առաքելությունը ամենից առաջ պատմության լուսանցքից իր վիպասքով այդ առասպելական հերոսներին ժողովրդականացնելն էր: Փաստորեն, «Սասնա ծռեր» էպոսից հետո հաջորդ վիպերգային երևելի գործը հայ մշակույթի պատմության մեջ «Ռանչպարների կանչն» է, որի հեղինակը Դաշտենցն է, բայց որի մեջ անուրանալիորեն մեծ է Ռուբենի ավանդը:

Իր հիմնագծերով Դաշտենցի վիպասքը ոչ միայն առնչակից է «Սասնա ծռեր» -ին, այլև սերում է նրանից. ընդհանրական են հերոսների բնութագրիչ հատկանիշները, ծուռ սխրանքները, գործողությունների հիմնավայր Սասունը, հրաշապատում երևույթները, ասքային եղանակը և այլն: 19-րդ դարից էպոսին կամ վիպասանությանը փոխարինած ժամանակակից վեպի տարբերակիչ բնութագծերի մասին է. Ջրբաշյանը գրում է. «Վեպը ոչ թե սոսկ վերարտադրում է իրադրությունը, այլ վերլուծում, բացահայտում է նրա հասարակական, բարոյական, անձնական արմատները, լայնորեն ցույց է տալիս տվյալ երևույթի ներքին պատճառական կապերը կյանքի օրինաչափությունների հետ: Վեպը ձգտում է տալ հերոսների կյանքի և հոգեբանության շարժման, զարգացման լայն պատկերը, վերլուծել նրանց արարքները, խոհերի և հույզերի հաջորդական ընթացքը» [15]: Եթե հիմք ընդունենք Դաշտենցի՝ իր երկի ժանրային երկրորդ բնորոշումը և փորձենք տարազատել այն վիպասքից՝ տեղավորելով վեպի ժանրային շրջանակներում, պարզ կդառնա, որ այն ոչ լիակատար ազգային վեպ է, ոչ պատմավեպ, այլ վեպ-էպոպեա կամ հերոսական վեպ, ինչի ծագումնաբանությունը հանգում է դարձյալ էպոսին:

Դաշտենցը սկզբնաղբյուրային հավաստիությունը պահպանում է բոլոր առումներով՝ և՛ դեպքերի ու գործողությունների, և՛ հոգեբանական վիճակների ու հերոսների խոսքի, և՛ արտաքին նկարագրի պարագաներում: Պատմականությունը պահպանելու սկզբունքով հանդերձ, պետք է նշել, սակայն, որ Դաշտենցը չափազանց հարազատ է մնում Ռուբենին նաև լեզվաոճական իմաստով, ինչն էլ քննադատության մեջ տեղիք է տվել՝ երևույթը ընկալելու որպէս բանագողություն: Վիպասքի լավագույն հատվածներն, իսկապէս, նույնանում են Ռուբենի «Յիշատակներ»-ին, ասացվում բառացի կրկնությամբ՝ լավագույնս չխախտելով պատմավավերական երևույթների հավաստիությունն ու անմիջականությունը: Դաշտենցը գրեթե պատճենում է և՛ կերպարների հոգեվիճակը, և՛ խոսքի եղանակը, և՛ գործողությունները՝ կորցնելով իր անհատականությունը: Ռուբենը առարկայական ճշգրտությամբ է հիշատակում դեպքերը, պատմական դեմքերին, աշխարհագրական տեղանքը՝ մեկտեղելով դրանց գեղարվեստական պատկերավորությունը: Ճշգրիտ ժամանակագրությանը նա հավելում է պատկերավոր մտածողությունը, հոգեվերլուծությունը, դեմքերի ու իրողությունների անաչառ

ու սթափ գնահատումները, պատմաշխարհագրական նկարագրությունները: Ասպետական անօրինակ վեպ է յուրաքանչյուր ֆիդայու կյանք, և Ռուբենը պարտքի խոր գիտակցումով նախանձախնդիր է վերակերտել բոլորին անուն առ անուն: Պատմական հավաստիությունը, նկարագրական արվեստը, հավատամքի ուժ ունեցող գաղափարը, գործողությունների ներքին փոխկապակցվածությունը Ռուբենի հուշագրության արժանիքներից են: Ռուբենը պատմությունը ներկայացնում է ամբողջականորեն՝ փաստացի վավերագրությանը հավելելով գեղարվեստական հզոր լիցքեր: Դաշտենցը վիպասքում օգտագործել է հուշագրության ամենացայտուն դրվագները, որոնք, ոչ միշտ փոխկապակցված լինելով գործողությունների հաջորդականությամբ, թողնում են նաև անկախ պատումների տպավորություն:

«Ռանչպարների կանչ»-ի՝ որպես ազգային նորագույն վիպասքի արժեքն ու նշանակությունը հիմնովին և մեծապես պայմանավորված է Ռուբենի պատմությամբ՝ թե պատմագիտական, թե գեղարվեստական և թե գաղափարական առումով: Ռուբենի հիշատակարանը անփոխարինելի արժեք է ֆիդայական ժամանակագրության մեջ, և սա անժխտելի հրողություն է ոչ միայն ետահայաց գնահատումով. «Մեր յուշագիրներին եւ ոչ ոք կրցաւ անոր չափ հարազատ, կենդանի եւ ամբողջական կերպով ներկայացնել մեր վերջին 60-ամեակի յեղափոխական սերունդը,- նկատում է ժամանակակիցը,- անոր հոգեբանությունը, նկարագիրը, ոգորումները, անոր գաղափարականությունը, անձնուիրությունը, անոր մոլեռանդությունը, խստակեցությունը, անոր հերոսական խոյանքները, անոր ամբողջ աչքառու դեմքերն ու դէպքերը.... Անկասկած, մեծ գիտնական մը եւ փիլիսոփայ մը պիտի ըլլար, եթէ հայ յեղափոխական չղառնար» [16]:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Աղաբաբյան Ս., Արդի հայ գրականության պատմություն, հ. 2, Երևան, 1993, էջ 79:
2. Նույն տեղում, էջ 84:
3. М. Бахтин, Литературно-критические статьи, М., 1986, стр. 399.
4. Դաշտենց Խ., Ռանչպարների կանչը, Երևան, 1979, էջ 9-10:
5. Նույն տեղում:
6. Նույն տեղում, էջ 10:
7. Վարդանյան Կ., Սասուն աշխարհի բանասացը, Երևան, 2000, էջ 97:
8. Նույն տեղում, էջ 100:
9. Գասպարյան Ղ., Հայ գրականություն, գիրք 2, Երևան, 2002, էջ 191-192:
10. Ռուբեն, Հայ յեղափոխականի մը յիշատակները, հ.1, Թեհրան, 1982, էջ 33:
11. Գալշոյան Մ., Բրաբիոն ծաղիկ որոնողը, Ռանչպարների կանչը, էջ 521-526:
12. Նույն տեղում:
13. Նույն տեղում:
14. Ռուբեն, Հայ յեղափոխականի մը յիշատակները հ.1, էջ 5:
15. Ջրբաշյան Է., Գրականագիտության ներածություն, Երևան, 1996, էջ 280:
16. Ռուբեն, նշվ. աշխ., էջ 33, 27:

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Հայոց նորագույն էպոսը, ծագումնաբանությունը և հարակից հարցեր. Խաչիկ Դաշտենցի «Ռանչապարների կանչը» և Ռուբեն Տեր-Մինասյանի «Հայ յեղափոխականի մը յիշատակները»
Նարինե Հովհաննիսյան

Վիպասը կամ վիպասանությունը ավանդական ժանր է՝ ոճական և կառուցվածքային ինքնատեսակ համակարգով: Ժանրի բնութագրիչ հատկանիշներից է. Դաշտենցի վիպասը ունի զգալի են բանահյուսական լեզվամտածողությունը, սյուժետային լայնածավալ, բազմաձև ընդգրկունությունը, ազգային ոգեղեն կերտվածքի ընդհանրացումը, նյութի պարզ վերարտադրությունը, վավերականությանը միախառնված հրաշապատում լիցքը, նաև թեթև երգիծանքի տարրը հերոսների խենթ, արտասովոր գծերի հանդեպ, որ բնավ բացասական միտվածություն չունեն:

Պատմական հիմնական սկզբնաղբյուրը, որ մշակել է Խ. Դաշտենցը, Ռուբենի «Հայ յեղափոխականի մը յիշատակները» յոթատորյակն է: Մշակելով, հաճախ նույնիսկ ուղղակիորեն վերաշարադրելով այն՝ Դաշտենցը կերտել է ժամանակակից վիպասը՝ մեծապես նպաստելով արդի վիպասի զարգացման գործընթացին, ազդակ հանդիսացնելով վերջինիս ժանրային տիրույթի ընդարձակմանը:

РЕЗЮМЕ

Современный армянский эпос, генеалогия и смежные вопросы: «Зов пахаря» Хачика Даштенца и «Воспоминания армянского революционера» Рубена Тер-Минасяна
Нарине Оганесян

Ключевые слова: фидаинское движение, новейший роман, фольклорное мышление, сотворение чуда, первоисточник, подлинность, повторение, уникальный героизм, самоуважение, самопожертвование, паломничество.

Эпос - это традиционный жанр со стилистической и структурно уникальной системой. Характерные черты жанра имеются в творчестве Хачика Даштенца, отличающимся фольклорным мышлением, масштабным содержанием, многогранностью освещения сюжета, национальным духом, простотой изложения материала, чудесным сочетанием подлинности с элементами юмора и сатиры.

Главный источник исторического материала, который использовал Х. Даштенц - седьмой том "Мемуаров армянского революционера" Рубена Тер-Минасяна. Обработывая данный материал, иногда даже напрямую воспроизводя его, Даштенц создал современный роман, который в значительной степени способствовал процессу развития, обновления и расширению жанра.

SUMMARY

Modern Armenian Epic, Genealogy and Related Questions: Khachik Dashtents's "Call to Ranches" and Ruben Ter-Minasyan's "Memories of an Armenian Revolutionary"
Narine Hovhannisyan

Keywords: Fidelity movement, newest novel, folk-language thinking, miracle-filling, original source, authenticity, repetition, unique heroism, self-respect, self-sacrifice, pilgrimage.

A novel is a traditional genre with a stylistic and structurally unique system. The characteristic features of the genre is Kh. Dashtents' novels are marked by folk-language thinking, large-scale plot, multifaceted coverage, generalization of national spirits, simple reproduction of the material, miraculous blending of authenticity, as well as an element of satirical humor;

The main historical source developed by Kh. Dashtents is the seventh volume of Ruben's "Memoirs of an Armenian Revolutionary." By developing, often even directly reproducing it, Dashtents created a modern novel, greatly contributing to the development of the modern novel, driving the expansion of its genre.